

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

Պրոֆ. Էրնստ Մէյմանի «Դասախօսութիւններ փորձնական մանկավարժութեան մասին» գրքից

Նախընտանիքիւն

Վերարտադրութեան ժամանակամիջոցը մանուկի համար աւելի երկար է տևում, քան հասակաւորի համար. մինչդեռ հասակաւորը լրած խօսքին պատասխան տալու համար գործադրում է մօտ 400 հազարերորդական վայրկեան, երեխայի համար 5-10 վայրկեանը սովորական է։ Մանուկը աւելի հեշտութեամբ ամբողջով կարողանում է մի մասը վերարտադրել՝ քան մասով ամբողջը. օրինակ եթէ ասես «Ժամացոյց» ինտելլիգենտ երեխաները տրամաբանական մտածողութեան մէջ ցոյց են տալի առաւելութիւն. հեշտութեամբ գտնում են աւելի բարձր ու ընդհանուր գաղափարը. երեխաների մէջ զարգացած է աւելի գաղափարների հակադրութիւնը, քան համաձայնութիւնը։ Վերարտադրութեան արագութիւնը տարեց-տարի աճում է՝ որքան մանուկը տարիքով մեծ է, այնքան աւելի արագ է կատարւում վերարտադրութիւնը։ Ըստ Յիգենի անհատական մտապատկերներն աւելի ժամանակ են պահանջում, քան ընդհանուրները. հեռեապէս բովանդակութեամբ հարուստ մտապատկերները աւելի շատ հողեկան ոյժ են սպառում։ Յիգենը իւր մանկավարժական փորձերից այն եզրակացութիւնն է հանում, որ մտապատկերների վերարտադրման համար հարկաւոր է գըպրոցում ձևական վարժութիւններ կատարել։ Մանուկների մտապատկերները լինում են միակողմանի և ոչ բազմօրինակ. յաճախ նա իւր սիրածը չի կարողանում գործադրել. յաճախ իրենց տուած հարցի միտքը ըմբռնելու համար ժամանակ չեն գործադրում։

Հասակաւորները տեսած որեւէ տաւրկոյ, երեւոյթ չուտով են ըմբռնում, ընդունում իւր տաւաւորութիւն, բայց նրանց մտապատկերը հեշտութեամբ չեն կարողանում վերարտադրել, երեխաները առաջին տարիներում նոյնպէս շատ շուտով տեսածը ընդունում են, բայց մըտքում պահել դժուարանում են, այդ պատճառով նոյն բանի մասին բազմիցս հարցնում են հասակաւորին, Մանկավարժութեան տեսակէտից այն, ինչ որ մանուկին տալիս ենք, չպէտք է անպատճառ նրա ըմբռնողութեանը ու հասկացողութեանը յարմարացնել, այս դէպքում մանուկը առիթ չի ունենայ առաջ գնալու, և արուեստական կերպով դարդացման միևնոյն տատիճանի վրայ կըմնար:

Երեակայութիւնը ևս մեծ դեր է խաղում մանուկի կեանքում, որը կարող է և օգտակար լինել և վնասակար, երեակայութեան միջոցով մանուկը ստացած մտապատկերները մշակում է և դարձնում է իսկական հոգեկան պաշար, երեակայութիւնը մասերի է բաժանում մտապատկերների զուգորդութիւնը և կազմում է նոր զուգորդութիւններ, մանուկի խաղը կենդանի է դառնում, նրան շրջապատող առարկաները բովանդակութիւն են ստանում, երեակայութիւնը դեր է խաղում նաև յիշողութեան մէջ և այս պատճառով դառնում է մանուկի մօլորութիւնների «մանկական ստի» աղբիւրը, Երեակայութեան և գործունէութեան բնորոշ գիծը այն չէ, որ այդ դէպքում գործ են ածում շօշափելի պատկերներ և վերացական մտքի տարրերը բոլորովին բացակայում են, սօքա չեն կարող բացակայել, որովհետեւ հասակաւորի մտապատկերների ամբողջ նիւթը գոյութիւն ունի վերացական մտածողութեան շնորհիւ, վերամշակուած ձևով, Ուշագրութիւնը կարելի է կամ ամբողջապէս կեդրոնացնել մտապատկերների և մըտքի բովանդակութեան վրայ, կամ սրանցից հետևող տրամաբանական եղրակացութիւնների վրայ, առաջին դէպքում մենք գործում ենք երեակայութեամբ, երկրորդում՝ մտածողութեամբ, երեակայութիւնը զանազան անհատական տարբերութիւններ ունի, որոնց սահմանը դժուար է

գծել, մի կողմից այն կարող է լինիլ առաւելապէս կրաւորական, երբ մարդ որեւէ բան պատկերացնելով իրեն որոշ նպատակ աչքի առաջ չունի, այլ անձնատուր է ինունմ իւր թափառող մտապատկերներն խաղին կամ կարող է լինել ներգործական, երբ որոշ նպատակ աչքի առաջ կայ, այս դէպքում մտապատկերները որոշ ընտրութեամբ են առաջ գալիս կան նաև կենդանի, թմրած, արտաքերող, զուգորդող, հարուստ, արդիւնատուր, աղքատ, ապարդիւն և այլ երևակայութիւններ։ Մանուկի երևակայութիւնը աւելի շատ կրաւորապէս է դործում առանց ծրագրի, աւելի շօշափելի քան վերացական, ոչ քննադատօրէն և զառանցանքին մօտեցող, եթէ նա իւր խրճիկներին ու խաղալիքներին շնչաւոր է դարձնում, կերպարանաւորում է, այդ դէպքում նա կրկնում է միայն այն, ինչ որ առաջ ինքը կրել է, տեսել կամ լսել է, ըստ Վունդի այդ երեխայի համար երկինքը մեծ սենեակների մի շարք է, ուր դրօսնում է Աստուած, երեխաները մահուանից յետոյ բարձրանում են երկինք կամ պարաններով կամ բարձր սարերի կատարն են ելնում, որ երկնքին հասնեն։ Որքան և խաղի ժամանակ երեխան աշխատում է մեծերին նմանուել և իր միանգամ կրածը կրկնել, միաժամանակ նա այդ դէպքում ինքնագործունէութեան էլ է ձգտում։

Պարզ է, ուրեմն, որ երևակայութեան ինքնագործունէութեան ձևական զարգացումը անհրաժեշտ է մանուկի ինքնուրոյն մտաւոր աշխատանքի համար։ Ժամանակակից ուսման մի թոյլ կողմն էլ այն է, որ մանուկը առհասարակ միակողմանիօրէն ընդունողի դերի մէջ է, իսկ ինքնուրոյն աշխատանքի չի վարժւում, այդ պատճառով նա սովորում է յետադաշում էլ ամեն ինչ պատրաստի ձևով ստանալու, իսկ օտեղծագործող աշխատանքի դժուարութեամբ է դիմում։ Երևակայութեան խիստ դործունէութեան դէպքում ամեն ինչ նրա մտքում խառնւում է, յաճախ ենթարկուելով մեծերի ներշնչմանը, ասում է և անում այն, ինչ որ հասակաւորին կարող է հաճելի լինել

կամ յարմարւում է պայմաններին, ստում է անդիտակցաբար, նրա մէջ այդ դէպքում մտածողութիւնը, գիտակցութիւնը շատ քիչ դեր են խաղում:

Մտածողութիւնը այն մտաւոր գործողութիւնն է, որի նպատակն է բացատրել այն տրամաբանական յարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունին գիտակցութեան զանազան բովանդակութիւնների մէջ. ըստ որում մտաւոր աշխատանքի ղեկավարը այդ նպատակն է, իսկ այդ աշխատանքը կոչւում է մտածողութիւն. այս դէպքում բառերը շօշափելի նշաններ ու սիմվոլներ են:

Երեխայի մտածողութիւնը զարգանում է ատիճանաբար. տրամաբանական եղրակացութիւնը նրանք ըմբռնում են միայն 14 տարեկան հասակում: Խօսելու ընդունակութիւնը երեխայի մէջ իսկապէս զարգանում է դպրոցում. խօսելուն հասնելու նախապատրաստական ատիճանը թոթովանքի շրջանն է. մինչև 18 ամսական երեխան, եթէ բնական պայմաններում է ապրում, պէտք է անջատ մասերով կազմուած խօսելուն վարժուի. 4 տարեկան հասակի վերջում համեմատաբար այդ զարգացումը վերջանում է. եթէ ի նկատի ունենանք նաև նախադասութիւններ կազմելու ընդունակութեան զարգացումը, պէտք է ասել, որ այդ վերջանում է դպրոցական դասընթացքի վերջում միայն: Գիւղի երեխաները համեմատաբար աւելի ուշ են սովորում կանոնաւոր ազատ խօսելը քան քաղաքի երեխաները, ի նկատի պէտք է ունենալ նաև հասակաւորների, խաղընկերների շրջանը. տան մէջ մինչդեռ անդրանիկ զուակը դանդաղ և ուշ է խօսել սովորում, ուշ ծնւածները համեմատաբար շուտ են սովորում. ոչ պակաս նշանակութիւն ունի նաև տեղական բարբառների գործածութիւնը, շնորհիւ այս հանգամանքի երեխաները աւելի ուշ են սովորում գրական լեզուով խօսելը:

Նախադասութիւններ կազմելու զարգացումն էլ ունի շրջաններ. առաջին շրջանը մի բառ—նախադասութիւն կազմելն է. երեխան մի բառ ասելով մի միտք է արտայայ-

տում, օրինակ «տա»-է տաւում, որ կարող է նշանակել՝ տար ման տա, գնանք մի տեղ կամ տուր ինձ այս ինչը և այլն, երկրորդ շրջանը չհօլոված բառերից նախագագութիւն կազմելն է, մի քանի բառեր է շարում իրար ետեւից առանց քերականական որ և է կապի, երրորդը՝ բայեր գործածելն է որոշ դէպքերում, յաճախ նա գործ է տաւում այն ձևերը, որոնք ամենից շատ են գործածւում, չորրորդը՝ կանոնաւոր նախագագութիւն կազմելու շրջանն է:

Երեխաները առհասարակ բառերի քիչ պաշար են ունենում և նախկին մանկավարժները, նոյն իսկ Պետտալոցցին, պահանջում էին, որ երեխաները մեքենայօրէն, առանց նոյն իսկ բառերի միտքը հասկանալու բառեր սովորէին, պաշարը հարստացնելու համար, այժմ ընդհակառակը պահանջւում է երեխային ոչ մի բառ չասել, որի միտքը նրան չի պարզուելու: Երեխաները մեծ մասամբ սկսում են իրենց ծանօթ խօսքերը միակողմանիօրէն գործադրել, բառերը այնպիսի տեղեր են գործադրում, որ իմաստին չեն համապատասխանում: Յաճախ նաև բովանդակութեանը անծանօթ բառերը խառնում են միմեանց հետ, կրճատելով կամ միացնելով նոր բառեր են կազմում: Մանուկի ոճը աւելորդաբանութեամբ լի է, անհրաժեշտ բառերը բաց թողուած են լինում: Երեխաները ունենում են արագախօսութեան, կակաղելու և այլ պակասութիւններ խօսելու մէջ, որոնց կարելի է ուղղել, նրանց բառերը ուղիղ արտասանելուն վարժեցնելով, այս դէպքում նա վստահութիւն է ձեռք բերում և ինքն էլ սկսում է իրեն ուղղել, ընդհանուր ջղերի զարգացումը, ճարպիկութեան, շարժողութեան, ոյժի զարգացումն էլ կողմնակի կերպով ազդում են խօսելու ընդունակութեանը:

Գեղարուեստական կողմի զարգացումը նոյն հասակի երեխաների մէջ տարբեր է լինում սեռի տեսակէտից, աղջիկները աւելի զգայուն են գոյների նկատմամբ, տղաները՝ ձևերի, գեղարուեստի նկատմամբ ընդհանրապէս նրանք դատողութիւն տալ չեն կարողանում, իսկական

գեղարուեստական դատողութիւն տալու համար հարկաւոր է ընդհանուր և գեղարուեստական ձևական դարգացում, նկարչութիւն և կադապարներ կազմել սովորեցնելու գլխաւոր նպատակը հէնց այն է, որ այդ տեխնիկայի միջոցով երեխաները սովոր են հասկանալ գեղարուեստի ինչ լինելը: Իսկական գեղարուեստի աշխարհը երկար ժամանակ անյայտ է մնում դպրոցի փոքր աշակերտների համար: Երեխաների վրայ աւելի ազդում է նկարի բովանդակութիւնը, քան գեղարուեստական կողմը, նրանք երաժշտական ձայները ու տօները դանաղանելն էլ դժուարութեամբ են ձեռք բերում, չափը աւելի շատ է ազդում, քան ներդաշնակութիւնը, չափը աւելի հեշտ են յիշում, քան երգի տօներ:

Սիրոյ, բնութեան և կրօնական դգացումները երեխաների մէջ դարգանում են հետզհետէ, ըստ Իւստի երեխան բնութեան դգացումը ձեռք է բերում բնութեան մէջ երկար մնալով, խաղալով, կրօնական դգացումը վաղ է երևում մանուկի մէջ, առաջ է գալի այդ իւր ծնողներին սիրելուց, դէպի նրանք ունեցած վստահութիւնից այլ և իւր անօգնական դրութեան դիտակցութիւնից: Ամենից լաւ և օգտակար միջոցը այս դգացումների դարգացման համար ընտանիքի կանոնաւոր վարք ու բարքն է, այս կողմից համեմատաբար մայրը աւելի է ազդում: Բարոյական դգացում դարգացնելը աւելի կարևոր է և մանուկի համար դիւրըմբռնելի, նա հնարաւորութիւն ունի իւր մանկական հասակում իսկ գործադրելու իւր սովորածը: Դաստիարակողի անձնաւորութիւնը միջնորդողի դեր է խաղում մանուկի կրօնական դգացումների դարգացման դէպքում, իրենց կեանքի համար մանուկները իդէալ էլ են ընտրում, նրանց բարի, իդէալական ցանկութիւնները երեւան են գալի 13 տարեկան հասակից սկսած: Առօրեայ կեանքում ապրող մարդկանց օրինակները նրանց վրայ աւելի են ազդում, քան կրօնական ու պատմական կեանքից առած մարդկանց օրինակները: Աղջիկները իրենց համար իբր իդէալ աւելի շատ ընտրում են իրենց ծանօթների

շրջանից, քան տղաները, վերջիններս հասարակական ու պատմական դորժիչներին վերադասում են. աղջիկները տղաներից աւելի յաճախ են կրօնական մարդկանց օրինակ ընտրում իրենց համար:

(շարունակելի)

Pessimist.



ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՅԻԼԼԷՐԻ ՉԵՒԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ.

(Շարունակութիւն)

Գաղափարները մեզ այնպէս չեն տրուած, ինչպէս ընտելեան դգայական իրերը, այլ միմիայն եղրակացւում են հայեցողութիւններից (Anschauung), այսինքն իրար նման իրողութիւնների ընդհանուր նման կողմերը միանում են և կազմում գաղափարի բովանդակութիւնը: Շատ յաճախ այդ գաղափարները չեն յառաջանում նպատակադրութեան և անհատի կամեցողութեան միջոցաւ, այլ աննախադիր, անգիտակից եղանակով, հէնց ընական իրերի դարգացմամբ, ուստի և այդպիսի գաղափարները կարող են «ընականաճնունդ» (naturwüchsig) կոչուել: Սակայն հողեկան մեխանիզմի միջոցաւ աննպատակ, անկամ և ընական եղանակով յառաջացած այս գաղափարները համարեա միշտ էլ լինում են անկատար, անորոշ, մութ և երբեմն էլ բոլորովին սխալ: Ահա այս հանդամանքը անհրաժեշտ է դարձնում կրթական-դասաւանդչական գրադման հոգսը, որի ժամանակ գործադրուող որոշ նպատակների և պլանների միջոցաւ աշակերտներին տրամաբանօրէն ուղիղ գաղափարների իւրացման ենք հասցնում:

Գպրոցում գաղափարներ կազմելու արհեստական եղանակը պէտք է նմանուի ընական գաղափարների յառաջանալու մեթոդին և որպէս զի ցանկալի նպատակների հասնի, պէտք է ուսուցման հետեւեալ աղտերը կատարէ և իրար յաջորդեցնէ:

1 Ուսուցման աղտ: Այս աղտի ժամանակ գաղափարը կազմելու համար հարկաւոր հայեցողութիւնները պէտք է ձեռք բերել և մշակել:

2 Ուսուցման աղտ: Առաջին ուսուցման աղտի մէջ քննուած հայեցողութիւնների ընդհանուր նման յատկութիւնները պիտի ջոկուին: Նիւթի մշակման գլխաւոր ձևը